

Ժողովուրդ

2 հունիսի ուրբաթ 2023
տպագրության ժԲ տարի

79
(2745)

Է. Երեան, Արմլուր 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ՉԵՐԲԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԲՐՔ ԿԼԻՆԻ



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ առաջիկայում ԵՊՀ-ում եւ Հայաստանի մյուս բուհերում աղմկահարույց ձեռնարկություններ են սպասվում կաշառքի գործով:

Մայիսի 24-ին հայտնի դարձավ, որ կաշառք ստանալու մեղադրանքով ձեռնարկվել են ԵՊՀ տնտեսագիտության եւ կառավարման ֆակուլտետի դեկան Հայկ Սարգսյանը, նրա տեղակալը, նույն ֆակուլտետի երկու դասախոսներ՝ Գագիկ Տոնոյանն ու Արմեն Ներսիսյանը:

Ի դեպ, «Ժողովուրդ» օրաթերթին նոր մանրամասներ են հայտնի դարձել դեկան Հայկ Սարգսյանի ձեռնարկությունից:

ԵՊՀ-ի մեր աղբյուրները փոխանցեցին, որ Հայկ Սարգսյանին մեկ ամիս ժամանակ էր մնացել պաշտոնավարելու. առաջիկայում նոր դեկանի ընտրություններ պետք է լինեին:

Վերջինս նախապես տեղյակ է եղել, որ իր վերաբերյալ համալսարանից տեղեկություններ են փոխանցում իրավապահ մարմիններին, ու շուտով գալու են իր «հետևից», ուստի որոշել է նախապես իր անունը մաքրելու համար չառաջադրվել դեկանի նոր ընտրություններին եւ հնարավորինս շուտ հեռանալ ԵՊՀ-ից, որպեսզի սկանդալի մեջ չհայտնվի:

Ինչպես ասում են, սակայն, շաբաթն ուրբաթից շուտ եկավ. Հայկ Սարգսյանը չհասցրեց հեռանալ բուհից, այլ ձեռնարկվեց:

«Ժողովուրդ» օրաթերթի լավատեղյակ աղբյուրները փոխանցում են, որ համալսարանում ձեռնարկություններն այսքանով չեն սահմանափակվում. առաջիկայում ԵՊՀ-ում եւ այլ համալսարաններում, հնարավոր է, կաշառքի գործով դեկաններ եւ դասախոսներ ձեռնարկվեն:

Չ նայած մարտի 12-ին ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի արտահերթ նիստում ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Հովհաննես Գրիգորյանը հայտնել էր, թե Սոթքում բաց հանքի շահագործումը շուտով կդադարեցվի, սակայն դեռ հաշվարկներ չկան որքան աշխատատեղեր կկրճատվեն: Մասնավորապես, մեր հարցմանը փոխնախարարից այսպիսի պատասխան ստացանք. «Ներկայիս դրությամբ կրճատումներ առկա չեն, հետեաբար նախ եւ առաջ պարզ չէ, թե ինչ քանակությամբ եւ ինչ մասնագիտական որակավորում ունեցող աշխատողներ են կանգնելու նոր աշխատանք գտնելու հարցի առջեւ, ինչպես նաեւ պարզ չէ, թե կրճատումների արդյունքում աշխատանքը կորցրած աշխատողներից քանիսն է նոր աշխատանքի ապահովման իրական խնդիր ունենալու»: Այս փոխնախարարից հետաքրքրվել էինք, թե ինչպես է ստացվել, որ մասնագիտությամբ բժիշկ լինելով՝ Նշանակվել է ՏԿԵՆ եւ զբաղվում է հանքարդյունաբերության համակարգմամբ: Ի պատասխան՝ նա Նշել է. «Իմ աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են իմ կենսագրության տվյալներում, որին մանրամասն կարող եք ծանոթանալ նաեւ ՀՀ ՏԿԵ նախարարության պաշտոնական կայքի, ինչպես նաեւ տարբեր ժամանակահատվածներում տրված հարցազրույցների տեսանյութերի միջոցով»: Տեսանյութերը նայեցինք, կենսագրությունը կարդացինք եւ տեսանք, որ փոխնախարարը մասնագիտությամբ վիրաբույժ է, եղել է Գյումրու «Բեռլին» արվեստի դպրոցի տնօրենը, 2018 թվականին Նշանակվել «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ տնօրենի տեղակալ՝ արվեստի դպրոցի ծառայության գծով, 2019-ի ապրիլին՝ առողջապահության փոխնախարար, իսկ նույն տարվա հոկտեմբերին ազատվել էր աշխատանքից: 2020 թվականի հունվարին նա Նշանակվել էր Ծիրակի մարզպետ՝ դառնալով Նիկոլ Փաշինյանի կառավարման ընթացքում Ծիրակում Նշանակված 3-րդ, իսկ Ծիրակի՝ 11-րդ մարզպետը: Նկատեցինք, որ երբեք կյանքում հանքարդյունաբերության հետ առնչություն չի ունեցել: ➔ էջ 3



Ի նշանակում քաղաքական իշխանությունները դեռեա արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Փամբուխչյանի օգնական, բլոգերի հայտնի «հեղափոխության պահապանների» ներկայացուցիչ Հայկ Ստեփանյանին փրկեցին 2-5 տարվա ազատազրկումից: Բանն այն է, որ 2020 թվականի հունիսի 21-ին Աշտարակ քաղաքի ճանապարհին Հայկ Ստեփանյանը մեքենայի ազդանշանով ճանապարհ էր ուզել, Գոմ Բարդախանյանից, սակայն վերջինս չի կարողացել ճանապարհ տալ, որից հետո, ինչպես նաեւ հայտնի է, «հեղափոխության պահապանները» ծեծել էին երիտասարդին: Այս դեպքը ունեցել էր շարունակություն. ծեծի ենթարկված Գոմ Բարդախանյանը հանդիման էր կանչել Ստեփանյանին ու իրեն ծեծելու համար համարժեք պատասխան տվել: Արդյունքում, միջին ծանրության վնասվածք հասցնելու համար մեղադրյալի արձույթն էին հայտնվել ԱԻՆ նախարարի օգնական Հայկ Ստեփանյանը եւ մյուս երիտասարդները: Ի դեպ, նրանց սպառնում էր 2-5 տարվա ազատազրկում: Եվ, ահա, մեզ հայտնի դարձավ, որ դատարանը, որպեսզի փրկի քաղաքական իշխանության «սրտի օգնական» Հայկ Ստեփանյանին, քննեց գործը ու որոշեց կարճել: Ստեփանյանը առաջին անգամ չէ, որ «նազբերկաների» կիզակետում է: «Սուրմուլու»-ի որբերգական օրերին, տեսախցիկների առաջ մաքրու, չփոշուտված հագուստով ու փայլվուն կոշիկներով լուսանկարվելուց ու դրանք տարածելուց բացի, նա նախարար Արմեն Փամբուխչյանի հետ փրկարարների համար ջուր տանելու հորդոր ինչեքրած քաղաքացիներից մեկն էր հետ-պատասխանի մեջ էր մտել: Ավելին, 2021 թվականին իշխանական խմբակցության պատգամավորները բարձրաձայնում էին այն հարցը, որ ԱԺ նախկին նախագահ Արարատ Միրզոյանի ծեծկռույցի գործով անցնող, «Ազատություն» ռադիոկայանի վրա հարձակված մարդը չի կարող պատգամավորի օգնական աշխատել: Եւ որպեսզի ընդդիմությունն էլ Ալեն Սիմոնյանի դեմ չօգտագործի «հեղափոխության պահապանների» հիմնադրի՝ ԱԺ-ում աշխատելու փաստը, քանի որ նա էլ ձվերով հարձակվել էր «Հայելի» ակումբի վրա, Ստեփանյանը հեռացվեց ԱԺ-ից, մտավ ԱԻՆ, իսկ հիմա էլ մաքրվեց քրեական գործից:



Միջազգային քրեական դատարանի հիմք հանդիսացող Հռոմի ստատուտը իսկական գլխացավանք է դարձել հայրենի իշխանությունների համար: ԶՊ-ականներն այդպես էլ չեն կողմնորոշվում՝ վավերացնել կոնվենցիան՝ կնքեցնելու Ռուսաստանի Դաշնությանը, չվավերացնել այն, կիսաթափեցնել Արեւմուտքին: Դեռ մարտի 24-ին ՀՀ Սահմանադրական դատարանը հայտարարեց, որ Միջազգային քրեական դատարանի հիմք հանդիսացող Հռոմի ստատուտը համապատասխանում է երկրի Սահմանադրությանը: Ինդիքը հետեյալն է. Հռոմի ստատուտի կարգավորումների համաձայն՝ միջազգային քրեական դատարանով քրեական պատասխանատվության ենթարկված անձանց նկատմամբ չի կարող կիրառվել համաձայնում կամ ներում, իսկ Հաագայի դատարանի կողմից մարտի 17-ին ՌԴ նախագահին ձեռնարկվելու օրոք էր իջեցվել: Ստացվում է՝ Հռոմի ստատուտին միանալով՝ ՀՀ-ն պարտավորվում է կատարել նաեւ Հաագայի դատարանի այս որոշումը եւ Հայաստան մտնելու պես ձեռնարկել Պուտինին: ՄԴ-ում մարտի 24-ին վավերացվելուց հետո՝ փաստաթուղթը հիմա կառավարությունում է. այն եռամսյա ժամկետում պետք է ուղարկվեր խորհրդարանի հաստատման համար: ՀՀ Սահմանադրության 116-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովն է վավերացնում միջազգային պայմանագրերը, այսինքն՝ առանց խորհրդարանի հաստատման Հռոմի ստատուտը չի կարող ուժի մեջ մտնել: Փաստաթուղթը պետք է ԱԺ գար եռամսյա ժամկետում. երեք ամիս անցել է, ԱԺ նիստերը մեկնարկում են հաջորդ շաբաթ, այսինքն՝ հաջորդ շաբաթ վերջնաժամկետն է, եւ պարզ կլինի՝ ինչ որոշում է կառավարությունը կայացրել Հռոմի ստատուտի վերաբերյալ: Իրավաբան մասնագետները «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում պարզաբանեցին, որ գործարհող կարող է եւ չուղարկել այն ԱԺ, ինչը կնշանակի, որ այս պահին պատեհ չի համարում փաստաթուղթը վավերականացնելը: Ընդգծեց, որ կառավարությունից ԱԺ ուղարկելու ժամկետը հաջորդ շաբաթ արդեն լրանում է, իսկ ԶՊ-ականները չգիտեն՝ ինչպես վարվել դրա հետ. մի մասը կարծում է, որ պետք է սառեցնել գործընթացը, չուղարկել ԱԺ, քանի որ կարծում են՝ առանց այն էլ այս գերլարված իրավիճակում պետք չէ լարել հարաբերությունները Ռուսաստանի հետ, որը պաշտոնապես արդեն հայտարարել է, որ բացասական է գնահատում Հայաստանի՝ այդ փաստաթղթին միանալը: ԶՊ-ականների մյուս մասն էլ կարծում է, որ դա կարող է միջազգային հարթակում օգնել Հայաստանին՝ ընդդեմ Ադրբեյջանի, բայց այն պարագայում, երբ անգամ ՄԻԵԴ-ի վճիռն չենթարկվեց Ադրբեյջանը, ու պարզ չէ, թե այս փաստաթուղթը ինչ կարող է տալ Հայաստանին եւ Արցախին: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Փաշինյանն էլ իր թիմակիցների հետ զրույցում ակնարկել է, որ միառժամանակ սառեցնել գործընթացը, որպեսզի անտեղի Ռուսաստանին չարեն իրենց դեմ: Իշխանական մեր աղբյուրների փոխանցմամբ՝ այս պահի դրությամբ գործարհողում վերջնական որոշում չկա Հռոմի ստատուտի մասով, չեն բառացում նաեւ, որ ԱԺ չհասնի այն:



ԱՆՊՐԱԴՂԱՐՁ

ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՂՐԻՄԻՏԻՎՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

Հայաստանում վերջին օրերի զարգացումների մասին «Ժողովուրդ» օրաթերթը խոսել է Էդգար Ղազարյանի հետ:

-Պարոն Ղազարյան, նախ զրոյցը սկսենք այսօրվա ամենասպասելի իրադարձությունից. Քիշնեում եռակողմ հանդիպում է սպասվում: Հանդիպելու են Ադրբեջանի, Հայաստանի ղեկավարները՝ Շառլ Միշելի ղեկավարությամբ: Ի՞նչ սպասումներ կան այս հանդիպումից:

-Եթե չեմ սխալվում, հանդիպմանը պետք է մասնակցի նաև Գերմանիայի Դաշնային Հանրապետության կանցլերը եւ Ֆրանսիայի նախագահը: Իհարկե, վերջին մասով դեռեւս հաստատումներն ամբողջական չեն: Ես կարծում եմ, որ այդ հանդիպումներից ոչ մի դրական սպասելիքներ չի կարելի ունենալ, ու, առհասարակ, Նիկոլ Փաշինյանի մասնակցությամբ որեւէ միջազգային հանդիպումից չի կարելի դրական ակնկալիք ունենալ: Նախորդ նմանատիպ հանդիպումը քառակողմ ձեւաչափով եղել է 2022 թվականի հոկտեմբերի 6-ին Պրահայում, որը, ըստ Իլիամ Ալիեւի արձանագրումների, եղել է պատմական այն իմաստով, որ պատմության մեջ առաջին անգամ Հայաստանը ճանաչել է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, այն էլ՝ Արցախը Ադրբեջանի կազմում: Եվ այդ խայտառակ հայտարարությունից հետո է շրջափակվել Արցախը, դրանից հետո տեղադրվել են սահմանային անցակետեր, վերջնականապես խզվել է կապը Հայաստանի ու Արցախի միջեւ: Ես կարծում եմ, որ այս հանդիպումը եւս մեծ ռիսկեր է իր մեջ պարունակում ոչ միայն Արցախի անվտանգության ու ճակատագրի համար, նաև մեր պետության համար ընդհանրապես:

-Պարոն Ղազարյան, Նիկոլ Փաշինյանը իր գրեթե բոլոր հայտարարություններում շեշտում է հստակ սահման՝ 29.800 ք/կմ, ու ինքն էլ իր ասույթում հաստատեց, որ դրա մեջ չեն մտնում Արցախն ու անկլավները, այսինքն՝ եթե Հայաստանը ճանաչում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, ապա Արցախն ու անկլավները պետք է հանձնվեն Նրան: Այնպիսի տպավորություն է, որ այս թիվը անընդհատ շեշտելով՝ հանրությանը տրամադրում է, որ սա մեր սահմանն է եւ վերջ, պետք է այսքանով սահմանափակվել: Ի՞նչ կասեք այս մասին:



րում է, որ սա մեր սահմանն է եւ վերջ, պետք է այսքանով սահմանափակվել: Ի՞նչ կասեք այս մասին:

-Մակերեսային լիմիտի մտածողության եւ անգրագիտության հետեանք է: Եթե պետության ղեկավարը որեւէ ցուցանիշ է հրապարակում, այդ ցուցանիշը պետք է լինի պաշտոնական՝ հիմնված պետական մարմինների տված տեղեկությունների վրա: Հայաստանի Հանրապետության տարածքի մասին տեղեկություն կարող է հայտնել միայն կառավարությանը ենթակա Կադաստրի կոմիտեն, իսկ Կադաստրի կոմիտեն պաշտոնապես հրատարակել է Հայաստանի ազգային ատլասը, որտեղ ներառված են Հայաստանի եւ Արցախի բոլոր աշխարհագրական օբյեկտներն ու վայրերը:

-Պարոն Ղազարյան, խոսեցիք Կադաստրի կոմիտեի մասին: Նիկոլ Փաշինյանն ասում է, որ 30 տարի ապրում ենք մի երկրում, որը չունի «կադաստրի վկայական»: Ի՞նչ կասեք այս մասին:

յան ասում է, որ 30 տարի ապրում ենք մի երկրում, որը չունի «կադաստրի վկայական»: Ի՞նչ կասեք այս մասին:

-Ռա նույնպես պրիմիտիվության ու անգրագիտության հերթական դրսեւորումներից է: Էդ դեպքում պետք է Նիկոլ Փաշինյանից հարցնել՝ աշխարհում որ երկիրը ունի «կադաստրի վկայական», միջազգային որ կազմակերպությունն է տալիս «կադաստրի վկայական»: Եթե ինքը ճանաչում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը՝ նշելով կոնկրետ թիվ՝ մակերեսային տարածքի վերաբերյալ, ապա Էդ դեպքում հարց է առաջանում՝ ուրիշ որ երկրի տարածքային ամբողջականությունն է Հայաստանը ճանաչում կոնկրետ թվերով: Նման բան որեւէ պետության հարաբերություններում գոյություն չի ունեցել:

ՔՐԻՏԻՆԱ ՍՈՒՇԵՂՅԱՆ

ԱՄԾ ԸՆԵՔԸ

ԸՆԴՀԱՅՆՎՈՒՄ Է



«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե է դիմել ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը՝ տեղեկացնելով, որ ծառայության Տավուշի մարզային վարչության շենքի հողատարածքն ընդլայնելու ու սպասարկումը բարելավելու համար անհրաժեշտություն է առաջացել նշված շենքի հարեանությանը առկա, համայնքային սեփականություն հանդիսացող 371.5 քառ. մետր մակերեսով հողամասը տրամադրել ծառայությանը:

Տեղեկացանք, որ ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտեն դեմ չէ եւ առաջարկում է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջեւան համայնքի սեփականությունը հանդիսացող՝ ք. Իջեւան, Անկախության փողոց թիվ 10/31 հասցեում գտնվող 371.5 քառ. մետր մակերեսով հողամասը նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը եւ ամրացնել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությանը:

Լ.Յ.

ԽՆԴԻՐԸ ՉԻ ԼՈՒԾՎԵԼՈՒ



Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը երեկ խորհրդարանի բակում պատասխանել է լրագրողների հարցերին: Նա ընդգծել է՝ կարելի է համարում, որ խաղաղության պայմանագրից հետո երաշխիքներ լինեն:

«Մենք տեսնում ենք, որ ունենք նյութերի 9-ի փաստաթուղթ, որի բոլոր կետերն ինչ-որ չափ խախտված են, ու այն երաշխավորը, այն պետությունը, որը երաշխավոր է հանդիսանում, ցավոք սրտի, ոչ բավարար կերպով է արձագանքում», - ասաց նա:

Ալեն Սիմոնյանը կարծում է՝ եթե Բաքու-Ստեփանակերտ երկխոսությունը տեղի չունենա, ինդիքը չի լուծվելու:

Ք. ՍՈՒՇԵՂՅԱՆ

ԱՆՅՈԳ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

ՍՈՒԹՔ ՀԱՄԱՅՆՔՐՈՒՄ ԷԻՆ

ԱՄ ՄԻՊ եւ հանրային հարցերի մեծական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմայանը սոցցանցի իր էջում գրում է. «Երեխաների իրավունքների դաշտանության միջազգային օրվա կադակցությամբ Հայաստանում ՅՈՒՆԵՍԿՅ-ի ներկայացուցիչ Քրիսթինե Վայզանդի, ՀՀ ՄԻՊ Անահիտ Մանասյանի եւ արքեպիսկոպոստների ներկայացուցիչների հետ սահմանամերձ Սոթք համայնքում եմ:



Սահմանամերձ բնակավայրերի երեխաների հետ միասին հավաքվել ենք՝ նշելու Երեխաների տոնը:

Օգտվելով առիթից՝ տիկին Վայզանդի հետ շրջեցինք Սոթքի դպրոցում եւ բացօթյա խաղասրահում, ծանոթացանք վերջիններիս անմիջապես պայմաններին:

Հյուրընկալվեցի նաև Սոթքի մանկապարտեզում, որը շատ խնամված էր ու պայծառ:

Հ.Գ. Թող բոլոր երեխաներն ապրեն խաղաղ երկրի ներքին եւ ունենան անհոգ մանկություն»:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀԱՐՑՈՒՄ

ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ ՍՈՒՔԻ ՀԱՆՔԻՆ

ՇԱՐԵՐ

Վրաստանն աջակցում է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության բանակցություններին: Դրանք բխում են ողջ Անդրկովկասի շահերից: Այս մասին լրագրողներին հայտնել է Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին Մոլդովայում Եվրոպական քաղաքական համայնքի զագաթնաժողովում:

«Կարծում եմ Վրաստանը չեզոք, անկողմնակալ դեր է խաղացել եւ խաղում մեր տարածաշրջանում կայունության եւ խաղաղության ամրապնդման գործում: Մենք հիմնական հարաբերություններ ունենք եւ՝ Ադրբեջանի, եւ՝ Հայաստանի հետ: Վրաստանը շատ կարեւոր միջնորդական դեր խաղաց 2021 թվականին՝ Ղարաբաղյան պատերազմից հետո: Ըստ էության, մենք աջակցում ենք խաղաղության բանակցություններին, որոնք ընթանում են Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ, եւ կարծում ենք, որ դա բխում է Վրաստանի, Ադրբեջանի, Հայաստանի եւ ողջ տարածաշրջանի շահերից», - Դարիբաշվիլիի խոսքերն է մեջբերել TACC գործակալությունը:

ՊԱՏՎԱՍՏՈՒՄ

2024 թվականից կմեկնարկի ջրծաղիկի դեմ պատվաստման գործընթացը: Աժ մշտական հանձնաժողովների համատեղ նիստում 2022 թվականի պետական բյուջեի կատարողականի հաշվետվության քննարկման ժամանակ այս մասին սասց Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը:

«Հաջորդ տարվանից ներդրվելու է ջրծաղիկի դեմ պատվաստումը: Այն առաջին փուլով կներդրվի միայն զորակոչվողների համար: Սա, կարծում եմ, կարեւոր քայլ է, որովհետեւ այդ տարիքային խումբը ջրծաղիկով վարակվելու դեպքում բավականին բարդ են տանում է հիվանդությունը, եւ այն շատ արագ է տարածվում, ուստի շատ կարեւոր է սկզբում զորակոչների համար ներդրվել, այնուհետեւ երեխաների համար կներդրվենք», - սասց Ավանեսյանը:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը հունիսի 1-ին աշխատանքային ընդլայնված խորհրդակցություն է անցկացրել կառավարությունում:

Քննարկվել են Արցախի շուրջ ռազմաքաղաքական եւ երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակին առնչվող հարցեր:

Ոլորտային գերատեսչությունների ղեկավարները զեկուցել են հանրապետության նախագահի կողմից նախկինում տրված հանձնարարականների կատարման ընթացքի մասին:

Հանրապետության նախագահը, խորհրդակցության մասնակիցներին ներկայացնելով տարածաշրջանային վերջին զարգացումները, նշել է, որ երկրում իրականացվող բոլոր աշխատանքների ու մշակվող ծրագրերի հիմքում պետք է լինեն անվտանգային ռիսկերը, շրջափակման, էներգետիկ ճգնաժամի եւ այլ հանգամանքների երկարատեւ առկայությունը:

Այդ համատեքստում նախագահը տվել է մի շարք նոր կարճաժամկետ ու երկարաժամկետ հանձնարարականներ անվտանգային ռիսկերի դիմակայման, շրջափակման ու էներգետիկ ճգնաժամի հարուցած հիմնական դրոշմների հարթահարման նպատակով:

«Ժողովուրդ» օրաթերթը մի քանի գրավոր հարց էր ուղարկել ՀՀ սահմադրական կառավարման եւ ենթակառուցվածքների փոխնախարար Հովհաննես Հարությունյանին:

Մասնավորապես, նրան ուղարկել էինք հետևյալ հարցերը՝

1. Դուք խորհրդարանում հայտնել էիք, որ Սոթքի հանքավայրը փակվել է, հանքանյութ չկա, այն չի գործելու, կրճատում ենք 53 աշխատող: Այդ աշխատողների սոցիալական հարցը ինչպե՞ս եք լուծելու, նրանք տեղավորելու եք այլ աշխատանքի, թե՞ ոչ:

2. Դուք պետական պաշտոնյա եք. պլանավորել եք, թե սահմանափակ համայնքի բնակիչներն ինչպես են ապրելու, ինչ աշխատանքով:

3. ԻՆՉ բանակցություններ են վարվում այդ հանքի սեփականատերերի հետ, որովհետեւ, ըստ տեղեկությունների, բաց հանքը փակվում է, սակայն փակ հանքը աշխատելու է:

4. Դուք մասնագիտությամբ բժիշկ էիք. ինչպե՞ս եղավ, որ աշխատանքի անցաք ՏԿԵՆ-ում ու զբաղվում եք հանքարդյունաբերությամբ:

5. Մեր տեղեկություններով՝ հանքարդյունաբերողները փորձում են Ձեզ հետ կապ հաստատել, ու Դուք հարցին լուծում եք տալիս գումարի դիմաց: Նրանք են այդպես ասում, ու հարցն այստեղ մեծ գումարների մասին է:

Ներկայացնում ենք փոխնախարարի պատասխանները.

«Այսպիսով, հարցման 1-ին համարակալումը ստացած հարցի առնչությամբ պետք է նշել, որ ներկայիս դրությամբ կրճատումներ առկա չեն, հետեւաբար նախ եւ առաջ պարզ չէ, թե ինչ քանակությամբ են ինչ մասնագիտական որակավորում ունեցող աշխատողներ են կանգնելու նոր աշխատանք գտնելու հարցի առջեւ, ինչպես նաեւ պարզ չէ, թե կրճատումների արդյունքում աշխատանքը կորցրած աշխատողների քանիսն է նոր աշխատանքի ապահովման իրական խնդիր ունենալու: Հետեւաբար, կարծում եմ, որ ներկայիս դրությամբ Ձեր բարձրագույն հարցին օբյեկտիվ պատճառներով կղճվարանան պատասխանել անգամ համապատասխան գերատեսչությունը եւ զբաղվածության մարմինները:

Հարցման 2-րդ հարցի վերաբերյալ հայտնում եմ, որ իմ աշխատանքային գործունեությունը վերաբերյալ հրապարակված կյուբերը եւ ընդերքօգտագործման ոլորտում նախաձեռնված օրենսդրական բարեփոխումները պատշաճ ուսումնասիրելու արդյունքում կարելի է արձանագրել, որ նախաձեռնված մի շարք բարեփո-



խումներ ուղղված են ապահովելու համայնքների (այդ թվում նաեւ՝ սահմանափակ համայնքների) սոցիալ-տնտեսական զարգացումը: Մասնավորապես, առաջարկվում է ուսումնասիրել 2023 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-52-Ն օրենքը, որով սահմանվել են համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման նպատակով համայնքների բյուջեներին հատկացնել անվերադարձ կարգով տրվող մասհանումներ՝ հանքարդյունաբերող ընկերությունների կողմից պետական բյուջե վճարվող ռոյալթիից: Հարկ է նշել, որ այս կամ այն ոլորտում առկա խնդիրների լուծման վերաբերյալ քաղաքականության մշակումը եւ նախաձեռնությունների իրականացումը հանդիսանում են ամենօրյա աշխատանքի մաս, որի ուղղությամբ իրականացվող գործողությունների արդյունքները օբյեկտիվ պատճառներով ապահովվում են որոշ ժամանակ անց:

Հարցման 3-րդ կետին ի պատասխան հայտնում ենք, որ չնայած հարցադրման ձեւակերպումը հստակ չէ, եւ «այդ հանքի» անորոշ ձեւակերպումը այլընտրանք չի թողնում, քան ենթադրություն անել, թե Դուք կոնկրետ որ հանքի վերաբերյալ եք տեղեկություն ցանկանում ստանալ, այնուամենայնիվ հայտնում ենք, որ ոլորտի առանձնահատկություններով պայմանա-

վորված հանքի շահագործման որոշակի փուլում շահագործման օպտիմալությունը կարող է պայմանավորված լինել ստորգետնյա կամ բաց եղանակով իրականացնելու միջոցով: Այլ կերպ ասած՝ շահագործման եղանակը ընտրվում է՝ հաշվի առնելով այն, թե որ եղանակի միջոցով է հնարավոր ապահովել հանքի շահագործման առավելագույն արդյունավետությունը:

Հարցման 4-րդ հարցի վերաբերյալ հայտնում ենք, որ ինչպես արդեն նշվեց, իմ աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են իմ կենսագրության տվյալներում, որին մանրամասն կարող եք ծանոթանալ նաեւ ՀՀ ՏԿԵ նախարարության պաշտոնական կայքի, ինչպես նաեւ տարբեր ժամանակահատվածներում տրված հարցազրույցների տեսանյութերի միջոցով:

Ներկայացված 5-րդ հարցի առնչությամբ հայտնում ենք, որ եթե Ձեզ մոտ առկա է բավականաչափ վստահություն Ձեր կողմից նշված անհայտ աղբյուրի նկատմամբ, ապա այդ փաստի առթիվ առաջարկվում է նախաձեռնել համապատասխան իրավական գործընթաց, միաժամանակ հաշվի առնելով սուտ ցուցմունք տալու քրեաիրավական, ինչպես նաեւ անձի պատիվը, արժանապատվությունը ու գործարար համբավը վիրավորելու եւ զրպարտելու հետեւանքները»:

Ն.Գ.

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՅՏԱՐԱՐԵԼ Է ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երեկ լրագրողների հետ զրույցում Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սատկ Խաչատրյանը հայտնել է, թե համավարակի ընթացքում կատարված չարաշահումների գործով կհարցաքննվի այդ ժամանակ առողջապահության նախարարի պաշտոնը զբաղեցրած Արսեն Թորոսյանը:

Ավելին, ArmLur.am-ի տեղեկություններով՝ նախկին նախարար, այժմ ԶՊ խմբակցության պատգամավոր Արսեն Թորոսյանին արդեն ծանուցում է ուղարկվել:

Հիշեցնենք, որ Հակակոռուպցիոն կոմիտեն քրեական վարույթ է նախաձեռնել 2020-2021 թվականներին Կորունավիրոսի դեմ պայքարի ընթացքում կատարված չարաշահումների առնչությամբ: Գործի շրջանակում մեկ ամսով կալանավորվել էր Երեւանի փոխքաղաքապետ, առողջապահության նախկին փոխնախարար Գեորգ Սիմոնյանը: Ըստ Հակակոռուպցիոն կոմիտեի՝ այն ժամանակ առողջապահության փոխնախարար եղած Սիմոնյանը, պատասխանատու լինելով պետական ֆինանսավորման բաշխման համար, քվոր-սանիկական կապ ունենալով «Մեդլայն» կլինիկայի տնօրեն Բաբկեն Շահումյանի հետ, բավարար վերահսկողություն չի իրականացրել, ինչի հետեւան-

քով «Մեդլայն Կլինիկ» ԲԿ-ի տնօրենը հափշտակել է շուրջ 120 միլիոն դրամ: Շահումյանը կալանավորված է:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ԼԻՆԵԼՈՒ

Երեկ Երեւանի քաղաքապետարանում հյուրընկալվել են երեխաները: Դպրոցականներին ամենահուզող հարցերից մեկը տրանսպորտի համակարգին էր վերաբերում: Փոխքաղաքապետ Տիգրան Ավինյանը երեխաներին խոստացավ, որ շատ արագ փոփոխություններ են լինելու:

ՔՐԵԱԿԱՆ

ՀԱՂՈՐԴՈՒՄ Է ՆԵՐԿԱՅԱՑՔԻՆ

2023թ. փետրվարի 21-ին Ա.Գ.-ն փաստաբան Վ.Պ.-ի միջոցով հայցադիմում է ներկայացրել ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ասյանի դատարան՝ Վ.Պ.-ի հետ 05.05.2011թ. կնքված փոխառության գործարքն անվավեր ճանաչելու եւ որդես հետեւանք 1 /մեկ/ մլն ԱՄՆ դոլար գանձելու պահանջների մասին: ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ասյանի դատարանի դատավորը, ուսումնասիրելով հայցադիմումը, կից փաստաթղթերով ենթադրյալ հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել ԱՀ գլխավոր դատախազություն:

Արցախի գլխավոր դատախազությունից հայտնում են, որ հաղորդման քննարկմամբ պարզվել է, որ հայցվոր Ա.Գ.-ի փաստաբան Վ.Պ.-ի կողմից դատարան ներկայացված Ա.Գ.-ի եւ Վ.Պ.-ի միջեւ 05.05.2011թ. ստեփանակետ քաղաքում կնքված պայմանագրի պատճենը կեղծ է, նրանում «Փոխատու» եւ «Փոխառու» անվանումների դիմաց առկա ստորագրությունները կատարված չեն Ա.Գ.-ի եւ Վ.Պ.-ի կողմից:

Միաժամանակ պարզվել է, որ վերջիններիս կողմից չեն կատարված նաեւ հայցվորի եւ պատասխանողի ներկայացուցիչներ՝ ԱՀ Փաստաբանների պալատի փաստաբան Վ.Պ.-ի եւ Ռ.Ե.-ի կողմից դատարան ներկայացված՝ 26.01.2023թ. ստեփանակետ քաղաքում Ա.Գ.-ի եւ Վ.Պ.-ի անվամբ կազմված, իրավունք վերապահող փաստաթուղթ հանդիսացող լիազորագրի «Լիազորող» անվան դիմաց առկա ստորագրությունները: Ավելի ուշ, պատասխանողի ներկայացուցիչ Ռ.Ե.-ն դատարան է ներկայացրել 15.03.2023թ. թվագրմամբ ստեփանակետ քաղաքում կնքված «Հաշտության համաձայնագիր», որով հայցվորի եւ պատասխանողի ներկայացուցիչները եկել են համաձայնության, որ դատարանի վարույթում քննվող քաղաքացիական գործի վարույթը կարճվի, իսկ վեճն ավարտվի՝ պայմանով, որ հայցվորը հրաժարվում է պահանջներից, իսկ պատասխանող



Վ.Պ.-ն ստանձնած գումարային պարտավորությունը կատարված համարելու դիմաց հայցվորին կօտարի ստեփանակետ քաղաքի Վ.Սարգսյան-24/34 հասցեում գտնվող եւ սեփականության իրավունքով իրեն պատկանող առեւտրի սրահը:

Փաստորեն, Ա.Գ.-ն 2011թ. մայիսի 05-ի կեղծ փոխառության պայմանագրով դիտավորությամբ քողարկել է խեղաթյուրել է առանձնապես խոշոր չափերի հասնող՝ 1 /մեկ/ մլն ԱՄՆ դոլար դրամական միջոցների ծագման աղբյուրը, եւ մինչեւ 05.05.2015թ. իր քրոջ ամուսին Վ.Պ.-ին փոխառությամբ տրված վերոնշյալ գումարի գանձման պահանջի դիմաց համաձայնել է ստանալ Վ.Պ.-ին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը, իսկ Վ.Պ.-ն կեղծ փոխառության պայմանագրով նպատակ է ունեցել փոխարկել (կոնվերտացնել) հանցավոր ճանապարհով ստացված հիշյալ անշարժ գույքը:

Նկարագրված հանցանքների կատարման դեպքերով 17.05.2023թ. հարուցվել է քրեական գործ՝ ԱՀ քրեական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելը (փողերի լվացումը), 375-րդ հոդվածի 1-ին մասով (ապացույցներ կեղծելը), 345-րդ հոդվածի 1-ին մասով (փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշներ կեղծելը, իրացնելը կամ օգտագործելը) եւ 345-րդ հոդվածի 1-ին մասով:

Քրեական գործով մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ դատավարական ղեկավարումը եւ դատախազական հսկողությունը իրականացնում է ԱՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն, սեփականության, տնտեսական գործունեության եւ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների գործերով բաժինը:

ԼՈՒՐԵՐ

ԱԱԾ-Ն՝ ԱՐԱԲԿԻՐԻ ՔՆՆՉԱԿԱՆՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթին մանրամասներ են հայտնի դարձել, թե ինչու է ԱԱԾ-ն երեկ գիշեր գրոհել ՀՀ քննչական կոմիտեի Արաբկիրի քննչական բաժին:

Երեգ գրել էինք, որ, «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն, ԱԱԾ-ն գրոհել է Արաբկիրի քննչական բաժին:

Մեր ունեցած տեղեկությունների համաձայն՝ մեկ քննիչի տարել են ԱԱԾ քննչական վարչություն: Տեղեկացրել էինք նաեւ, որ այնտեղ գտնվողներից մեկը փորձել է փախչել, սակայն կանխել են նրա փախուստը, որի ժամանակ կոտրվածք է ստացել:

Եվ այսպես, բանն այն է, որ ԱԱԾ-ն օպերատիվ տեղեկություններ է ունեցել, որ բաժնի քննիչները քրեական վարույթների շրջանակներում հայտնաբերված թմրանյութերն իրացնելու գործընթաց են իրականացրել կամ, այսպես ասած, վաճառք են կազմակերպել:

Ավելին, կասկածներ կան, որ կաշառքի գործողություններ են եղել: Ասել է թե՛ օրինակ՝ քննիչը սպանություն է բացահայտել ու իր մոտ է գտնվում այն զենքը, որի միջոցով սպանություն են կատարել. անցնում է որոշ ժամանակ, նա որոշում է այդ զենքը վաճառել մեկ ուրիշին: Մեզ հասած լուրերի համաձայն՝ 4 քննիչի ԱԱԾ-ն ձերբակալել է:

Ք. Ս.

ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՃՏՊ

Արագածոտնի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնը մայիսի 31-ին՝ ժամը 15:29-ին, ահազանգ է ստացել, որ Սասունի գյուղի մոտակայքում տեղի է ունեցել ՃՏՊ. կա տուժած:

Ինչպես տեղեկացրին ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայությունից, դեպքի վայր է մեկնել ՆԳՆ ՓԾ մարզային փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատի մեկ մարտական հաշվարկ:

Պարզվել է, որ «Mercedes» մակնիշի ավտոմեքենան (վարորդ՝ Ս. Խ., ծնված 2003 թ.) բախվել է կայանած «Zil» մակնիշի ավտոմեքենային (վարորդ՝ Գ. Պ., ծնված 1955 թ.):

Նշվում է, որ մինչ փրկարարների կանչի վայր հասնելը «Mercedes» մակնիշի ավտոմեքենայի վարորդը եւ ուղեւորը հոսպիտալացվել են Աշտարակի բժշկական կենտրոն, որտեղ արձանագրվել է Վ. Խ.-ի (ծնված 2008 թ.) մահը:

Փրկարարները հոսանքագրվել են «Mercedes» մակնիշի ավտոմեքենան եւ փակել գազի բալոնի փականը:

ՔՐԵԱԿԱՆ

ԴԱՏԱԽԱԶՐ ՈՐՈՇԵՑ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ դատախազի կողմից հանձնարարություն է տրվել վերացնել Դիլիջանի քրեականի պետի նկատմամբ քրեական հետապնդում չհարուցելու որոշումը:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթի ձեռքում էր հայտնվել տեսանյութ, որտեղ Ներքին գործերի նախարարության Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի քրեականի պետը հյուրանոցներից մեկում ծեծի է ենթարկում 16-ամյա անչափահաս տղայի:

Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ Ներքին գործերի նախարարության Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի քրեականի պետ Արսեն Գայթանյանը մտնում է Հաղարծին հյուրանոցային համալիր եւ համար պատվիրում: Մատուցողն ասում է, որ պատվիրված համարի դիմաց պետք է գումար վճարել, որից հետո սկսվում է քրեականի պետի ու աշխատակցի հետ գումարի շուրջ խոսակցություն, ինչից հետո էլ քրեականի պետը սկսում է հարվածներ հասցնել 16-ամյա մատուցողին:

Այս դեպքի առթիվ հարուցվել է քրեական վարույթ:

Նշենք, որ ավելի ուշ Քննչական կոմիտեն պաշտոնապես հայտնել էր, որ քրեականի պետը զրջացել է իր կատարած արարքի համար, եւ որոշում էր կայացվել նրա նկատմամբ քրեական հետապնդում չհարուցել:

ՔՍՈՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿԵՂԾ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՈՒ ԿԱՇԱՌՔ

Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող Ա.Լ.-ն քրեական վարույթով կեղծել է ապացույցներ եւ ստացել խոշոր չափով կաշառք. հայտնում են ՀՀ գլխավոր դատախազության լրատվական ծառայությունից:

● Ըստ ոստիկանության տվյալների՝ մայիսի 31-ից հունիսի 1-ը Հայաստանի Հանրապետությունում ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 57 դեպք, որոնցից 2-ը՝ նախկինում կատարված:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԿԱՐԿՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ

Մայիսի 31-ին ժամը 14:30-ի սահմաններում, մոտ 40 րոպե տևողությամբ մարտ կարկուտ է տեղացել Նոյեմբերյան խոշոր համայնքի սահմաններում Ոսկեպար գյուղում: Ոսկեպարից հայտնեցին, որ առայժմ չեն կարող հայտնել, թե կարկտահարությունից ինչքան են վնասվել գյուղի ցանքատարածությունները, սակայն արդեն հաստատված խորհարքներին կարկուտը վնասներ է պատճառել: Տավուշի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Վաղարշակ Սուքոյանը հայտնեց, որ մայիսի 31-ին կարկտահարություն է եղել Նաե Իջեան խոշոր համայնքի Կիրանց և Աճարկուտ բնակավայրերում: Տավուշի մարզպետարանի գյուղատնտեսության վարչության պետի վկայությամբ՝ Տավուշի մարզպետարանի և համայնքային ենթակայության հանձնաժողովները կարգված են մայիսի 31-ին տեղի ունեցած կարկտահարության պատճառած վնասի չափերը: Տավուշի մարզում ընդհանուր առմամբ գործում է 14 հակակարկուտային կայան, որոնք բոլորն էլ տեղակայված են Նոյեմբերյան խոշոր համայնքում: Մարզի 3 խոշոր համայնքներում՝ Իջեանում, Դիլիջանում, Բերդում, հակակարկուտային կայաններ չկան: Գյուղատնտեսության ոլորտում պարտադիր պետական ապահովագրություն չի գործում, գյուղացու բերքը, ինչպես հարյուրամյակներ առաջ, կախված է «երկնքի ծերից»:

ՀԱՐՅԸ ԿՈՐՈՇՎԻ

Հունիսի 14-ին լրանալու է Իջեան քաղաքի 39-ամյա բնակիչ Սասուն Էդիյանի երկամյա կալանքի ժամկետը, և Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանը պետք է որոշում կայացնի նրա նկատմամբ խափանման միջոց ընտրելու վերաբերյալ: Ս. Էդիյանը դատարանի որոշումով կալանքի տակ է 2023թ. ապրիլի 14-ից: Բանվորությամբ զբաղվող, շինարարական տարբեր աշխատանքներ կատարող, մանկահասակ երեք երեխաների հայր Սասուն Էդիյանին մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 198-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով («Սեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի այլ գործողությունները, այդ թվում սեռական հարաբերության նմանակումը կամ սեռական կարիքները բավարարելը, որոնք կատարվել են հանցագործությունից տուժած անձի կամ անձի հակառակ կամ նրա կամքն անտեսելով, հանցագործությունից տուժած անձի կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ հանցագործությունից տուժած անձի անօգնական վիճակն օգտագործելով, ընտանեկան դրությամբ կամ հաշմանդամությամբ պայմանավորված՝ խոցելի վիճակում գտնվող անձի նկատմամբ»): Ենթադրյալ հանցագործությունը կատարվել է այս տարվա մարտին: Ս. Էդիյանը մեղադրվում է Իջեան քաղաքի բնակիչ 7-ամյա տղայի նկատմամբ սեռական բնույթի գործողություններ կատարելու համար: Նա չի ընդունում մեղադրանքը: Նրա ընտանիքի անդամի վկայությամբ՝ Սասուն Էդիյանը անմեղ է, Նշված հանցագործությունը 7-ամյա տղայի հնարած է, երեխան առողջության հետ կապված խնդիրներ ունի, ենթադրյալ հանցագործությունը երեխայի երեակայության արդյունքն է:

ՈՍԿԱՆ ՍՍՐԳՅԱՆ Տավուշ

ԴԻՍՈՒՄ

ԱՐ ՄԻՊ-Ը՝ «ՅՈՒՆԻՍԵՖ»-ԻՆ

«Արցախի երեխաներին սղառնացող էկզիստենցիալ սղառնալիքների դայմաններում մենք եւս մեկ անգամ կոչ ենք անում միջազգային հանրությանը՝ ի դեմս «ՅՈՒՆԻՍԵՖ»-ի, քայլեր ձեռնարկել»,- հայցնել է ԱՐ ՄԻՊ Գեղամ Սեփանյանը:

«Երեխաների պաշտպանության միջազգային օրը հրամայական է եւս մեկ անգամ բարձրաձայնել այն մարտահրավերների և զրկանքների մասին, որոնց այսօր բախվում են Արցախի 30 000 երեխաներ Ադրբեյջանի կողմից 6 ամիս շարունակվող շրջափակման հետեւանքով: Երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի համաձայն՝ աշխարհում բոլոր երեխաներն ունեն հիմնարար և անօտարելի իրավունքներ, սակայն արդեն շուրջ վեց ամիս է, ինչ արցախցի երեխաները շարունակում են զրկված մնալ իրենց հիմնական և տարրական իրավունքներից և ազատություններից, ինչպիսիք են կրթությունը, առողջապահությունը, զարգացումը, ընտանիքի վերամիավորումը, հոգեբանական և մտավոր անձեռնմխելիությունը, բավարար կենսամակարդակը, առաջին անհրաժեշտության իրերի հասանելիությունը: Ադրբեյջանի կողմից Լաչինի միջանցքի շրջափակման պատճառով շուրջ 550 երեխա զրկվել է տուն վերադառնալու և ընտանիքների հետ վերամիավորվելու իրավունքից՝ մնալով օտարված ծնողական խնամքից, սիրուց և ընտանեկան միջավայրից: Ընդհանուր առմամբ, ավելի քան 1820 երեխա շրջափակման պատճառով չեն կարողացել տեսնել իրենց ծնողներին մեկին կամ երկուսին, ինչի հետեւանքով երեխաները լուրջ հոգեկան տառապանքներ են կրել: Արցախի բոլոր հաստատություններում կրթական գործընթացը պարբերաբար խաթարվել է Ադրբեյջանի կողմից Արցախի կենսական ենթակառուցվածքների կանխամտածված թիրախավորման պատճառով՝ հանգեցնելով երեխաների ընկալունակության և ուշադրության մակարդակի ընդհանուր նվազմանը: Համապատասխան սոցիալականացման բացակայությունը, խաթարված կրթությունը, ինչպես նաեւ ընտանիքների և հարազատների հետ բաժանումը հանգեցրել է հոգեբաններին և Նյարդաբաններին երեխաների այցելությունների աճին շուրջ 47 տոկոսով: Արցախցի երեխաների



ազատ տեղաշարժի իրավունքի խախտման պատճառով ուսանողները չեն կարողանում դիմել ուսումնական հաստատություններ և Արցախից դուրս օգտվել կրթական հնարավորություններից: Արցախ սևահամթերքի ժամանակին և բավարար մատակարարումների բացակայության պայմաններում երեխաները, այդ թվում՝ նորածինները, կանգնած են թերսնուցումից, վիտամինների և հանքանյութերի պակասի և դրանից բխող առողջական խնդիրների լուրջ սպառնալիքի առաջ: Երեխաների իրավունքները մարդու իրավունքներ են, և դրանք պետք է լինեն համընդհանուր՝ անկախ երեխայի ծագումից կամ էթնիկ պատկանելությունից: Արցախցի երեխաները պետք է օգտվեն նույն իրավունքներից և հնարավորություններից, ինչպես աշխարհի բոլոր երեխաները, այնինչ 21-րդ դարում,

երբ քաղաքակիրթ աշխարհը հետապնդում է կայուն զարգացման նպատակներ, արցախցի երեխաները դեռևս պայքարում են իրենց հիմնական իրավունքների պաշտպանության և հնարավորությունների ապահովման համար: Արցախի երեխաների սպառնացող էկզիստենցիալ սպառնալիքների պայմաններում մենք եւս մեկ անգամ կոչ ենք անում միջազգային հանրությանը՝ ի դեմս ՅՈՒՆԻՍԵՖ-ի, քայլեր ձեռնարկել արդյունավետորեն պաշտպանելու մեր երեխաների իրավունքները և կանխելու Ադրբեյջանի հայատյաց և բռնատակն ռեժիմի կողմից ամեն օր ինչեզվոր սպառնալիքները: Աշխարհի բոլոր երեխաների, այդ թվում՝ Արցախի 30,000 երեխաների անհոգ ներկայի և ապագայի պաշտպանությունը մեր համընդհանուր պատասխանատվությունն է»:

ԼՈՒՐԵՐ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ՈՒ ՏՈՒՐՔԵՐ

ՊԵԿ-ը 2023թ. հունվար-մայիս ամիսների ընթացքում ապահովել է 912.2 մլրդ դրամ հարկային եկամուտներ և պետական տուրքեր: Հարկ վճարողներին և ֆիզիկական անձանց վերադարձվել է շուրջ 151.9 մլրդ դրամ. այս մասին հայտնում են ՊԵԿ-ից: 2023 թվականի հունվար-մայիս ամիսների ընթացքում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ապահովվել է 912.2 մլրդ դրամ հարկային եկամուտներ և պետական տուրքեր, որը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշից ավելի է 150.4 մլրդ դրամով կամ 19.7%-ով: 2023 թվականի հունվար-մայիս ամիսների ընթացքում հարկ վճարողներին և ֆի-

զիկական անձանց վերադարձվել է շուրջ 151.9 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշից ավելի է 62.1 մլրդ դրամով կամ 69.1%-ով:

ԳՈՒՄԱՐ՝ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻՆ

ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 1-ի նիստում որոշում է կայացվել 117 միլիոն 392 հազար դրամի չափով գումար հատկացնել Գեղարքունիքի մարզային Նշանակության որոշ ավտոճանապարհների, տրանսպորտային օբյեկտների, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հիմնանորոգման համար:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության վարչությունից, 38 միլիոն 535,6 հազար դրամ հատկացվել է Մարտունի քաղաքի Մյասնիկյան փողոցի մայթերի կառուցման, 4 միլիոն 992 հազար դրամ՝ Սեւան-Մարտունի-Գետալի-Մ-2/ միջպետական Նշանակության ավտոճանապարհի 61+380 կիլոմետրում գտնվող կամրջի հիմնանորոգման նախագծի կազմման, 50 միլիոն դրամ՝ Ներքին Գետաշեն բնակավայրի ջրամատակարարման համակարգի վերակառուցման, 13 միլիոն 554,6 հազար դրամ՝ Ճամբարակ համայնքի Վահան բնակավայրի ջրամատակարարման համակարգի վերակառուցման, 10 միլիոն 311,3 հազար դրամ՝ Վարսեր բնակավայրի ջրամատակարարման համակարգի վերակառուցման աշխատանքների համար:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 22 ճՏՊ. 1 մարդ զոհվել է, 25-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

Team

ՉԵՌՔ Է ԲԵԲՎԵԼ SkyTel-ի 30%-ը

Team ընկերությունների խումբը ձեռք է բերել Վրաստանի հեռահաղորդակցության առաջատար երեք օպերատորներից մեկի՝ SkyTel-ի 30% բաժնեմասերը:

SkyTel-ի ամրակցված եւ անլար ինտերնետը հասանելի է Վրաստանի ավելի քան 2200 բնակավայրում՝ ծածկելով բնակչության մոտ 93%: Ինտերնետ եւ թվային հեռուստատեսության ծառայություններ մատուցելու համար ընկերությունը օգտագործում է միջազգային մի քանի կապուղիներ:

Այս գործարքով Team ընկերությունների խումբը նպատակ ունի դիվերսիֆիկացնել Հայաստան մուտք գործող ենթակառուցվածքները, բարձրացնել ինտերնետի հասանելիության եւ անվտանգության մակարդակը, բացի այդ, հիմք է ստեղծում խմբի անդամ Team Telecom Armenia-ի համար՝ տարածաշրջանում դիրքը ամրակազմելու:

«Սա լավ նախադրյալ ու հեռանկար է բացում միջազգային այլ ընկերությունների հետ ապագա համագործակցությունների ու մեր առկա պոտենցիալի մեծացման համար: Այս գործարքը Հայաստան էլ ավելի հուսալի եւ անխափան ինտերնետով ապահովելու մեր ռազմավարական քայլերից է»,- նշել է Team ընկերությունների խմբի համահիմնադիր Հայկ Եսայանը:

«Ի դեմս նոր համաեփականատիրոջ՝ SkyTel-ը ձեռք է բերել փորձառու եւ ուժեղ գործընկեր: Team-ի գիտելիքների եւ փորձի, ինչպես նաեւ ընկերությունում մասնակցության շնորհիվ՝ մենք ակտիվորեն կգարգացնենք օպտիկամանրաթելային ինտերնետի ծառայությունը, ինչը Team-ն արդեն անում է Հայաստանում: Մասնավորապես, մենք նախատեսում ենք մեկ տարվա ընթացքում ընդլայնել օպտիկամանրաթելային ցանցի ծածկույթը Վրաստանի եւս 220-400 բնակավայրերում»,- նշել է SkyTel-ի տնօրեն Արջիլ Խոջաշվիլին:

SkyTel-ը հիմնադրվել է 2010 թվականի դեկտեմբերին: Ըստ Վրաստանի հաղորդակցությունների ազգային կոմիտեի (GMCC)՝ Վրաստանի երեք խոշորագույն հեռահաղորդակցական ընկերություններից մեկն է: SkyTel-ի օպտիկամանրաթելային մալուխների երկարությունը գերազանցում է 6000 կմ-ը, իսկ անլար ինտերնետի բազային կայանների թիվը 1200 է:

Ընկերությունը մոտ 70 000 բաժանորդին տրամադրում է ինտերնետ եւ IPTV թվային հեռուստատեսության ծառայություններ: Թիմ ընկերությունների խմբին են պատկանում այդ թվում նորարարական, ինժեներական ու տեխնոլոգիական լուծումներ առաջարկող Team Telecom Armenia, Team Systems, Team Solutions, TeamPay ընկերությունները, ինչպես նաեւ Buy.am առցանց մոլը:

ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾ

ՑԱՐԱԾՔ՝ ՄԱՐԶՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ կառավարության նիստում երեկ հավանության է արժանացել «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը: Այս մասին հայտնում են ԿԳՄՍՆ-ից:

Հարցը գեկուցել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը: Նրա խոսքով՝ հավաքական թիմերի մարզական կենտրոնին հատկացված տարածքը, որը ներկայումս ներառված է մասնավորեցման ենթակա գույքի ցանկում, առաջարկվում է հանել այդ ցանկից եւ հանձնել ԿԳՄՍ նախարարությանը՝ այն հավաքական թիմերի մարզումներին ծառայեցնելու նպատակով:

Ըստ Ժաննա Անդրեասյանի՝ մարզահամալիրը բավականին մեծ հնարավորություններ է ընձեռում. ունի ննջարանային մասնաշենք՝ նախատեսված շուրջ 60 հոգու համար, 2 մարզադահլիճ՝ յուրաքանչյուրը 1600 քմ: Դահլիճներից մեկի բարձրությունը 9 մետր է, որը հնարավորություն է տալիս այնտեղ իրականացնելու ամենատարբեր սպորտաձեւերի մարզումներ եւ մրցաշարեր:

«Մարզահամալիրը կարող է նաեւ միջազգային չափորոշիչներին համապատասխան ենթակառուցվածք դառնալ սպորտային միջոցառումների եւ հավաքների համար: Այստեղ կարող են կազմակերպվել թե՛ խաղային եւ՝ թե՛ մենապայքարային մարզաձեւերի պարապմունքներն ու հավաքները: Այս պահին հավաքական թիմերի հավաքների համար ունենք ընդամենը երկու հնարավորություն՝ Ծաղկաձորի մարզական բազան եւ Օլիմպիականը, որոնք ունեն սահմանափակ հնարավորություններ: Հաշվի առնելով միջազգային մրցաշարերի կազմակերպման ու հյուրընկալման, ինչպես նաեւ մեր հավաքականների՝ տարբեր ուղղություններով գրանցած արդյունքները (նախորդ տարի ռեկորդային թվով մեդալներ ենք ունեցել՝ 307, այս տարի արդեն 135 մեդալ՝ 10 մարզաձեւից)՝ նոր ենթակառուցվածքների պահանջ կա»,- նշել է նախարարը եւ հավելել, որ այս պահին կառուցվում եւ վերակառուցվում են 12 մարզահամալիրներ եւ մարզադպրոցներ:

Փոխվարչապետ Սիեր Գրիգորյանը հետաքրքրվել է, թե նախատեսվում են արդյոք վերանորոգման աշխատանքներ, եւ ինչ վերջնաժամկետ է սահմանված, ինչին ի պատասխան՝ նախարարը նշել է, որ առկա են նախնական հաշվարկներ հետագա աշխատանքների՝



մարզահամալիրը պատշաճ տեսքի բերելու համար:

Անդրադառնալով վերջնաժամկետին՝ Ժաննա Անդրեասյանը տեղեկացրել է, որ օրենքի փոփոխությունը դեռ պետք է հաստատվի Ազգային ժողովում, որը հավելյալ ժամանակ կպահանջի: «Քանի որ մենք դիմել մի քանի խոշոր միջազգային մրցաշարեր Հայաստանում անցկացնելու համար, օրինակ՝ ծանրամարտի աշխարհի առաջնությունը, ապա ցանկալի կլինի, որ ենթակառուցվածքները պատրաստ լինեն 1-2 տարվա ընթացքում»:

Փոխվարչապետ Սիեր Գրիգորյանը հետաքրքրվել է նաեւ, թե ինչպես են իրականացվելու հետագա սպասարկման աշխատանքները: Ի պատասխան՝ նախարարը նշել է, որ այդ ենթակառուցվածքները կարող նաեւ որոշակի եկամուտ բերել եւ գեներացնել այն միջոցները, որոնք կուղղվեն պահպանման ծախսերին: «Սա բերելու է մեր կողմից ուսումնամարզական հավաքների համար տրամադրվող գումարի որոշակի խնայու-

ղությունների. այս պահին մենք աջակցում ենք ֆեդերացիաներին ուսումնամարզական հավաքները կազմակերպելու ոչ պետական որոշակի տարածքներում, որոնց համար հավելյալ վճարումներ ենք կատարում: Այն ժամանակահատվածներում, երբ հավաքականներն այդտեղ չեն անցկացնի մարզումներ, համալիրը կարող է օգտագործվել տարբեր մրցաշարերի կազմակերպման, վարձակալության եւ այլ նպատակներով՝ այդպես ապահովելով սեփական եկամուտներ»:

Նախարարը նաեւ տեղեկացրել է, որ սպորտի ոլորտի ռազմավարության նախագծում ենթակառուցվածքների կառավարումը եւ դրանց եկամուտների գեներացման մոդելների մշակումն առանձին ուղղություն է, այդ թվում՝ մասնավոր հատվածի հետ համագործակցության տարբերակով:

Նշենք, որ մարզական կենտրոնի տարածքը գտնվում է Երեւանի Ծիծեռնակաբերդի խճուղի 5 հասցեում:

«ԱԿԲԱ»

ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Մեկնարկում է Օրգանական գյուղատնտեսության զարգացման 2023-2024թթ. անվճար ծրագիրը: «Ակբա» բանկը, Գերմանիայի բնության դաշտանության միության (NABU) հետ համատեղ, մեկնարկում է Օրգանական գյուղատնտեսության զարգացման 2023-2024թթ. անվճար ծրագիրը:

Հայտարարված մրցույթի շրջանակում հարթող ճանաչված կազմակերպություն-

ները, ֆերմերներն ու գյուղատնտեսները կկարողանան «Ակբա» բանկի եւ NABU-ի համատեղ ֆինանսական եւ տեխնիկական աջակցության միջոցով ստանալ օրգանական սնունդ արտադրողի հավաստագրում եւ անհամեմատ մեծացնել արտադրանքի արտահանման հեռանկարները:

Օրգանական գյուղատնտեսության զարգացման ծրագրի 2023-2024թթ. մրցույթին մասնակցելու համար հե-

տաքրքրված տնտեսվարողները կարող են մինչեւ սույն թվականի հունիսի 15-ը ներառյալ լրացնել դիմում-հայտը:

Հայաստանում օրգանական գյուղատնտեսության զարգացումը խթանելու եւ ոլորտի արտադրողներին օժանդակելու նպատակով 2015թ.-ից մեկնարկվել է «Ակբա» բանկի եւ Գերմանիայի բնության պահպանության միության (NABU) համատեղ Օրգանական գյուղատնտեսական զարգացման անվճար ծրագիրը:

«ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՀՈՒՐԱՆՆԱԿԱՆ

ՀԱՄԵՐԳԱՅԻՆ ԵՐԵԿՈ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ

ՀՀ ժողովրդական արժիս, բալետային Ազատ Ղարիբյանի և ՀՀ ժողովրդական արժիս, դարուսույց Թերեզա Գրիգորյանի 100-ամյակների առթիվ կկազմակերպվի համերգային երեկո: Համերգը տեղի կունենա հունիսի 11-ին Ալ. Մոլեդիսյանի անվան օդերայի երաժիշտության կազմակերպության համերգային սրահում: Նույն ծրագրով համերգային երեկո կկազմակերպվի հունիսի 18-ին Գյումրու Վ. Աճեմյանի անվան դետալային դրամատիկական թատրոնում:

Համերգային ծրագրերի ընթացքում ներկայացվելու են Ազատ Ղարիբյանի պարային բեմադրությունները:

Բալետի արտիստ, պարուսույց Ազատ Ղարիբյանը 1962 թվականին եղել է Հայաստանի պարի պետական անսամբլի գեղարվեստական ղեկավարն ու գլխավոր բալետմայստրը, 1963-1983 թվականներին՝ Թաթուլ Ալթունյանի անվան երգի-պարի պետական անսամբլի գլխավոր բալետմայստրը: 1959-ին նրա նախաձեռնությամբ Երեւանի պարարվեստի ուսումնարանում բացվել է ժողովրդական պարի բաժին, որը ղեկավարել է երկար տարիներ՝ ստեղծելով հայկական պարի ուսուցման ծրագիր: 1986-ին ստեղծել է «Կռունկ» պարային համույթը, որի համար բեմադրել է լավագույն պարային համարները՝ Ա.Բաբաջանյանի երաժշտությամբ «Էլեգիա», Կոմիտասի «Սուկաց հարսեր», Խ. Ավետիսյանի «Հուշեր», Մ. Փրիդոնյանի «Հայոց աղջիկներ», ժողովրդական երաժշտությամբ «Հարսանիք», մեկ գործողությամբ «Քաջ Նազար» բալետը, Սայաթ-Նովայի երաժշտությամբ զուգապար, ազգագրական պարերի շարաններ: 1956-ին արժանացել է Հայաստանի վաստակավոր, 1980-ին՝ ժողովրդական արտիստի կոչման:

Բալետի արտիստ, պարուսույց Թերեզա Գրիգորյանը եղել է Ազատ Ղարիբյանի կինը: 1955 թվականին Երեւանի պարար-



վեստի ուսումնարանում հիմնել է դերասանի վարպետություն առարկան: 1956-ին մասնակցել է Մոսկվայում կայացած հայ արվեստի տասնօրյակին, որտեղ կատարել է Գոհարի դերը Գ. Եղիազարյանի «Սեւան» բալետում, Շամիրամի դերը՝ Ս. Չուխաճյանի «Արշակ Բ» օպերայի ինտերմեդիայում, եւ արժանացել է «Պատվո նշան» շքանշանի: 1972-1974 թվականներին եղել է Երեւանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի թատրոնի բալետային խմբի ղեկավարը:

1974-2004 թվականները ղեկավարել է Երեւանի պարարվեստի պետական ուսումնարանը, 1980-ին՝ Երեւանի թատերական ինստիտուտի բեմական շարժման

ամբիոնը (1995-ից՝ դոցենտ): 1981-ին արժանացել է երկրորդ «Պատվո նշան» շքանշանին: 1986-ին Ազատ Ղարիբյանի հետ հիմնել է «Կռունկ» պարային անսամբլը, իսկ ամուսնու մահից հետո շարունակել է ղեկավարել անսամբլը: 1963 թվականին արժանացել է Հայաստանի արվեստի վաստակավոր գործչի, 1968-ին՝ ժողովրդական արտիստի կոչման: Պարային գեղեցիկ զուգային նվիրված համերգները նախաձեռնել են «Զարկ» ժողովրդական երաժշտության եւ պարի աջակցման հիմնադրամը՝ ժողովրդական երաժշտության եւ պարի ազգային կենտրոնի, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ:

ԼՈՒՐԵՐ

«Pregomesh»-Ը՝ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՈՒՄ



Երգչուհի Սիրուշոն սոցիալական ցանցի իր էջում նոր հրապարակում է արել, որում ներառված են արխիվային եւ թարմ լուսանկարներ: Արխիվային լուսանկարներն արվել են տարիներ առաջ Շուշիում, նոր կադրերը՝ JCK Expo-յում՝ «Pregomesh» ապրանքանիշի տաղավարում:

«Մի քանի տարի առաջ՝ հենց այս օրերին, Շուշիում էինք...»

Ելույթից առաջ բարձրացել էինք Ջորդոզ, լուռ ստեղծել էինք ու փորձում էինք գնահատել այն, ինչ ունենք...

Այսօր չունենք էլ Շուշին... Բայց կանք մենք ու մեր գործով փորձում ենք աշխարհին փոխանցել այն, ինչ տեսել ենք ու պահել մեր սրտում՝ բնությունը, սերը...

Այս պահին աշխարհի ամենախոշոր ցուցահանդեսներից մեկում ներկայացնում ենք մերը՝ հայկականը: Չենք կոտրվում, հակառակը, ավելի նպատակասլաց ենք ու ուժեղ», - հրապարակմանը կից գրել է Սիրուշոն:

Wildberries

ԱՐԱՋԱՆԳ՝ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՑ

«Ժողովուրդ» օրաթերթի խմբագրությունը բազմաթիվ անհաջակներ է ստանում ֆաղափարներից ռուսական Wildberries ընկերության վերաբերյալ:

Ըստ քաղաքացիների բողոքների՝ Wildberries ընկերությունն անհասկանալի պատճառներով պարբերաբար թանկացնում է գնված ապրանքի վերադարձի գումարը: Այժմ նախկին 450-դրամի փոխարեն այն դարձել է 850 դրամ: Քաղաքացիներին զայրացրել է նաեւ այն հանգամանքը, որ երեխաների համար նախատեսված կաշաները, նպարտեղները չեն կարողանում հատով գնել, քանի որ Wildberries-ը փոխել է գման ձեւը. այն այսուհետ պետք է գնել որոշակի քանակով, ինչը մեծ անհարամարություններ է պատճառել եւ վրդովմունք առաջացրել քաղաքացիների շրջանում:

Սահազանգի հետքերով «Ժողովուրդ» օրաթերթը այցելեց Wildberries-ի պատվերների հանձման կետերից մեկը եւ փորձեց տեղում հասկանալ, թե որն է խնդիրը:



Հավելենք, որ Wildberries-ի գործադիր տնօրեն Տատյանա Բակալչուկը, անդրադարձալով քաղաքացիների դժգոհու-

թյուններին, ասել է, որ այն թույլ է տալիս հավասարակշռել գնորդների եւ վաճառողների շահերը:

ԹՈՒՐԻՍՏԵՆՍՏԱՆԻ ՕՐԵՐ՝

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի Հանրապետությունում մայիսի 31-ից հուլիսի 2-ն անցկացվում են Թուրքմենստանի մշակույթի օրեր:

Ծրագրի բացման ներկա էին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը, Թուրքմենստանի մշակույթի նախարար Ատաբեկի Շամուրադովը, ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արա Խզմալյանը, ՀՀ-ում Թուրքմենստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Մուհամետգելդի Այագովը:


Հանդիսավոր արարողությանը ողջունի խոսքով հանդես է եկել ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը: Նա շնորհավորել է Հայաստանում Թուրքմենստանի մշակույթի օրերի անցկացման կապակցությամբ եւ նշել, որ մշակույթի օրերը կարելու է նշանակալից եւ, միեւնոյն ժամանակ, երկար սպասված միջոցառում են:

● Հունիսի 3-ին Երեւանի Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում տեղի կունենա «Սերը տարիք չի հարցնում» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2000-3000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:



ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Հայաստանում փոստով ի՞նչ չի կարելի ուղարկել:
Դավիթ Սարգսյան (34 տարեկան)




ՊԱՏԱՍԽԱՆ. ՀՀ տարածքում փոստային առաքանիներով առաքելու համար արգելվում է՝

- առարկաներ, որոնք իրենց բնույթով կամ փաթեթավորմամբ կարող են վնաս հասցնել փոստային կապի կամ սուրհանդակային կապի օպերատորի աշխատողներին, աղտոտել փոստային կապի մյուս առաքանիներն ու սարքավորումները,
- թմրամիջոցներ կամ հոգեմեդիկամենտներ, ռադիոակտիվ, պայթուցիկ, թունավոր, դյուրավառ եւ այլ վտանգավոր նյութեր,
- թունավոր կենդանիներ եւ բույսեր,
- Հայաստանի Հանրապետության դրամական նիշեր եւ տարադրամ (բացառությամբ ՀՀ կենտրոնական բանկի եւ դրա մասնաճյուղերի կողմից ուղարկվող),
- շուտ փչացող սննդամթերք:

«ԺՈՂՎՈՒՐԳ». Նաեւ արգելվում է առաքել հրազեն, գազային զենք, նետողական զենք, ազդանշանային զենք, օդանշիչ զենք, ռազմամթերք, սառը զենք, էլեկտրաշնչային սարքեր եւ կայծահաններ, ինչպես նաեւ զենքի եւ հրազենի հիմնական մասեր:

ԱՂԵՏՆԵՐ

ՀԱՐՑ. Երկրաբաժնի կանխատեսելի լինու՞մ է:
Ժորա Մնացականյան (22 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Հիմնականում դեռեւս լուծված չէ: Այս ուղղությամբ գիտակիրառական աշխատանքներ են տարվում աշխարհի լավագույն սեյսմոլոգիական կենտրոններում, այդ թվում եւ ՀՀ ԱԻՆ սեյսմիկ պաշտպանության ծառայությունում: ԱԻՆ-ը մեծ ուշադրություն է դարձնում Ազգային սեյսմիկ բազմապարամետրային մշտադիտարկման դիտացանցի արդիականացմանն ու վերազինմանը: Կան կանխատեսման մի քանի հաջող փորձեր, սակայն չարդարացված կանխատեսումներն ավելի շատ են:

«ԺՈՂՎՈՒՐԳ». Կարելի է ասել, որ երկրաշարժերի կարճաժամկետ կանխատեսումը դեռեւս հավաստի եւ հուսալի չէ, սակայն չի բացառվում ակնհայտ նախանշանների հիման վրա արված կարճաժամկետ կանխատեսումը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ կառավարության նիստից



ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ու Քննչական կոմիտեի նախագահ Արգիշտի Զարամյանն ակտիվ գրույցների մեջ են: Մինչ փոխվարչապետ Միեր Գրիգորյանի գլխավորությամբ հարցեր են զեկուցում, դատախազն ու Քննչական կոմիտեի նախագահը գրուցում են: Հետաքրքիր է՝ ինչ են նրանք այդքան ակտիվ գրուցում. արդյոք փորձի փոխանակում է, թե՛ այլ հարցեր կան:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
 Բաժանորդագրվելու
 համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
 հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
 հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
 հեռ. 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:



Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադարձնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետևյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
 Ազգանուն՝ _____
 Առաքման հասցե՝ _____
 Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝ (060) 490049
 0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



☾	Շիրակ	+ 5 + 8 +18 + 22	☾	Արարատ	+15 + 17 +28 + 30
☾	Կոտայքի լեռներ	+ 8 + 11 +18 + 20	☾	Արմավիր	+13 + 16 +27 + 29
☾	Կոտայքի նախալեռներ	+13 + 16 +24 + 26	☾	Վայոց ձորի լեռներ	+ 7 + 10 +17 + 20
☾	Գեղարքունիք	+ 7 + 11 +18 + 21	☾	Վայոց ձորի նախալեռներ	+15 + 17 +25 + 28
☾	Լոռի	+11 + 16 +21 + 26	☾	Սյունիքի հովիտներ	+17 + 21 +27 + 31
☾	Տավուշ	+13 + 18 +25 + 29	☾	Սյունիքի նախալեռներ	+10 + 15 +21 + 24
☾	Արագածոտնի լեռներ	+ 7 + 11 +18 + 20	☾	Արցախ	+17 + 20 +26 + 29
☾	Արագածոտնի նախալեռներ	+12 + 16 +23 + 28	☾	Երեւան	+14 + 16 +26 + 28

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
 Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22^ա/3, հեռ՝ 010 54-64-23
 Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
 տրված է 24.11.2010
 Ստորագրված է տպագրության 1.6.2023
Պատկերը հարցերի համար 2-4 հարցերին 4 հարցերով 2021

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
 խմբագրություն հանձնված նյութերը չեն գրայնաչափվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»: